Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
հունիսի 25 -ի N 357 - Ա
որոշման

«ՇԱՐԺԱԿԱՆ ՌԵՆՏԳԵՆ ՍԱՐՔԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒՄ»
Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	«Մուրացան» համալսարանական հիվանդանոցային համալիր ՊՈԱԿ-ին շարժական ռենտգեն սարքի նվիրաբերում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Մասիսի 31, ՀՎՀՀ՝ 02269952)
4.	Ծրագիրը կատարողը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Մասիսի 31, ՀՎՀՀ՝ 02269952)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	«Մուրացան» համալսարանական հիվանդանոցային համալիր ՊՈԱԿ (ՀՀ, ք. Երևան 0075, Մուրացանի փող., 114 շենք)՝ առողջապահության բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	10 200 (տասը հազար երկու հարյուր) եվրոյին համարժեք ՀՀ դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Մուրացան» համալսարանական հիվանդանոցային համալիր ՊՈԱԿ (ՀՀ, ք. Երևան 0075, Մուրացանի փող., 114 շենք): Ընտրությունը կատարվել է համաձայն բարեգործությունը ստացողի աջակցության խնդրանքի:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2020 թվականի հուլիսի 1-ից մինչև նոյեմբերի 30-ը:

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առողջության խանգարումներ ունեցող երեխաների համար նախատեսվում է «Մուրացան» համալսարանական հիվանդանոցային համալիր ՊՈԱԿ-ին նվիրաբերել թվով 1 հատ SAXO 4T շարժական ռենտգեն սարք 10 200 եվրոյին համարժեք ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ: Միջոցառումը նախատեսվում է իրականացնել 2020 թվականի հուլիսի 1-ից մինչև նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Տվյալ ծրագրի շրջանակներում նախատեսվում է թվով 1 հատ SAXO 4T շարժական ռենտգեն սարքի ներմուծում 10 200 եվրոյին համարժեք ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից; Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003թ.-ի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ